

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ՝ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



ԳԻՈՐԳԻ ԳԱՆԱՐԻԱ. «ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԲՈՒՐՍ ՄԻԱՍԻՆ ԱՇԽԱՐՀԻՆ ՊԵՏՔ Է ՃՈՒՅՑ ՏԱՆՔ, ԹԵ ԻՆՉՊԵՍ ԵՆՔ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԱՆՃԿԱՅՆԵԼ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

Հոկտեմբերի 31-ին Վրաստանում կանցկացվեն 10-րդ գումարման խորհրդարանի ընտրությունները:

Ներկայիս ընտրությունները նշանակալիորեն տարբերվում են նորանկախ Վրաստանում անցկացված խորհրդարանական նախորդ 9 ընտրություններից:

Նորացված ընտրական օրենսգրքով խորհրդարանական 150 մանդատներից 120-ը բաշխվելու է համամասնական ընտրակարգով, 30-ը տրվելու է ընդլայնված ընտրատարածքներում մեծամասնական ընտրակարգով հաղթանակած մեծամասնական թեկնածուներին: Բացի այդ, հաստատվել է զրոյական ընտրաշեն, ինչը առանձին կուսակցություններին ու ընտրադաշինքներին խորհրդարանում իրենց ներկայացուցիչներն ունենալու հնարավորություն է ընձեռում:



(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ՍԱՆՍԵ ՉՈՒՐԱԲԻՇՎԻԼԻ. «ՀԱՆԳԻՍՏ ԳՆԱՑԵՔ ԱՐԴԱՐ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ»

Հոկտեմբերի 31-ին անցկացվելիք խորհրդարանական ընտրությունների կապակցությամբ Վրաստանի նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլին հանդես է եկել հատուկ ուղերձով:

«Ես դիմում եմ ձեզ երկրի համար կարելու այս փուլում: Կորոնավիրուսի զսպումն ու տնտեսության փրկելը, երկրի կայունությունն ու ժողովրդավարական

առաջընթացի ամրապնդումը երկրի ներկայիս և այլընտրանք չունեցող առաջնահերթություններն են: Այս պահին հարձակումն իրականացվում է այն ինստիտուտ-

ների վրա և փորձ է արվում վարկաբեկել այն անձանց, ում հասարակությունը վստահում է, եւ որոնք ամենից շատ են պետք (Շարունակությունը՝ 5-րդ էջում)

«ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱՋԱՆՔ». ԸՆՏՐԱՅԱՄԱՐԸ՝ 41



ԿԱՆԱԿԱՄԻՇՎԻԼԻՆ ՊԱՇՏՈՆԱՊԵՍ ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ՈՐՊԵՍ ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ

Հոկտեմբերի 30-ին Թբիլիսիի Պետկի թաղամասում անցկացվեց «Վրացական երազանքի» կողմից Թբիլիսիի Իսանի ընտրատարածքում մեծամասնական պատգամավորության թեկնածու Կախա Կախիշվիլու առաջադրման շնորհանդեսը:

Միջոցառմանը մասնակցեցին եւ լույս ունեցան Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան, Թբիլիսիի քաղաքապետ, «Վրացական երազանք» կուսակցության գլխավոր քարտուղար Կախա Կալաձեն:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)



ՂԻՄԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՏԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՄԱՅՆ ՀԱՅՈՒԹՅԱՆԸ

«Սիրելի ժողովուրդ, Հայաստանի Հանրապետության հպարտ քաղաքացիներ, Արցախի Հանրապետության հպարտ քաղաքացիներ, Սփյուռքի հպարտ հայություն. եղբայրներ եւ քույրեր. Արդեն մեկ ամիս է, ինչ թուրքադրբեջանա-ահաբեկչական ուժերը պատերազմ են մղում Արցախի եւ հայության դեմ:



Արցախի բանակի եւ քաղաքացիական բնակչության վրա այս ընթացքում թափվել են հազարավոր արկեր, հրթիռներ, բաց թողնվել հազարավոր անօդաչու թռչող սարքեր:

Հակառակորդը հարձակվել է տանկերով, ինքնաթիռներով, ուղղաթիռներով, ադրբեջանցիներով, ահաբեկիչներով, վարձկաններով, թուրք ու պակիստանցի հատուկ ջոկատայիններով:

Մեկ ամիս առաջ նրանք Արցախը արագ նվաճելու, Արցախը կործանելու, ծնկի բերելու խնդիր էին դրել իրենց առաջ:

Բայց այսօր Արցախը՝ թեկուզ վիրավոր, սակայն, կանգուն է, եւ այս ամենը առաջին հերթին մեր հերոսական բանակի, մեր հերոսական ժողովրդի, մեր հերոսական մարդու շնորհիվ:

Այս դաժան, բայց հերոսական ընթացքը մեզ վստահություն է տալիս. Արցախը կանգուն է մնալու, որովհետեւ մեր ոգին անկուտ-

րում է, մեր կամքը անսասան: Պատերազմը մտել է մի փուլ, երբ դրա շարունակության ամեն վայրկյանը տեղապտույտի մեջ է զգում ամեն անգամ հրադադարը ուխտադրուժ կերպով խախտող հակառակորդին փլուզելով նրա ունեցած իլյուզիաները:

Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարությունը այնքան է հաղթական լուրերով սնել սեփական համրությանը, որ նրանք արդեն երկար ժամանակ ամեն օր, ամեն րոպե, ամեն վայրկյան սպասում են Արցախի անկման, իրենց վերջնական եւ անշրջելի հաղթանակի մասին լուրին:

Ադրբեջանի համրությունը, սակայն, այդ լուրը չի ստանալու եւ այս լուրի անվերջ սպասումն է, որ քանդվելու է Արցախը նվաճելու ադրբեջանական պլանները: (Շարունակությունը՝ 7-րդ էջում)

ՂԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ՎՐԱՏԱՆԸ ՊԱՏՐԱՍՏ Է ՃԱՆԿԱՅԱԾ ՊԱՇԻ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵԼ ՂԻՄԱԿԱՅՈՂ ԿՈՂՄԵՐԻ ԲԱՆԱԿԱՅՈՒՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ

Վրաստանի արտաքին գործերի նախարար Դավիթ Չալկալիանին, անդադադառնալով ամերիկացի գեներալ Ֆիլիպ Բրիդլայի հայտարարությանը, թե ԱՄՆ-ը չունի Լեռնային Ղարաբաղի հակամարտությունն անտեսելու շքեղություն, եւ որ աշխարհի առաջնորդները պետք է լրջորեն քննարկեն Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման վերաբերյալ Վրաստանի նախաձեռնությունը, հայտարարեց, որ Վրաստանի դիրքորոշումն ուղղված է տարածաշրջանում կայուն խաղաղության հաստատմանը:



- Առաջին իսկ օրից մեր կոչն էր, որ տեղի ունենար իրավիճակի լիցքաթափում, Վրաստանը կողմերին առաջարկեց Թբիլիսիին որպես բանակցությունների հարթակ, - նշեց Դավիթ Չալկալիանին ու հավելեց, որ Վրաստանը երկու երկրների՝ Ադրբեջանի եւ Հայաստանի հետ ցանկանում է ունենալ բարիդրացիական հարաբերություններ:

- Այս առաջարկը միշտ օրակարգում է: Ցանկացած պահին, երբ մեր հարեւանները ցանկանան, պատրաստ ենք հյուրընկալել նրանց: Ինչպես քաջատեղյակ եք, այն փխրուն խաղաղությունը, որը ձեռք է բերվում պարբերաբար հրադադարի մասին

համաձայնագրերով, պետք է շարունակական լինի: Դա տարածաշրջանում կայունության կարիք ունի: Մենք անվտանգության խորհրդի շրջանակներում հավաքվել եւ վերահաստատել ենք, որ ցանկանում ենք երկու երկրների Ադրբեջանի մեր ռազմավարական գործընկերոջ եւ Հայաստանի հետ բարիդրացիական հարաբերություններ ունենալ:

Ուստի, հաշվի առնելով այն փաստը, որ երկու ազգությունների քաղաքացիները դարձրել են Վրաստանում, կարելու է, որ ամբողջ տարածաշրջանը դուրս գա այս իրավիճակից, - հայտարարեց Դավիթ Չալկալիանին:

ԳՈՐԾԱՐԻՐ

ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-ԻՅ 4 ԱՄՍՈՎ ԿՄԱՐՎԵՆ ԿՈՄՈՒՆԱԼ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ

Հոկտեմբերի 29-ի Վրաստանի կառավարության հերթական նիստում երկրի վարչապետ Գիորգի Գախարիան հայտարարեց, որ կառավարությունը, կորոնավիրուսի համավարակի հետևանքների հաղթահարման ծրագրի շրջանակներում, շարունակում է բնակչությանն օգնություն ցուցաբերել:



- Մենք արդեն հայտարարել ենք կառավարության հակաճգնաժամային ծրագրի երրորդ փուլի մասին: Դա ներառում է ինչպես բիզնեսի, այնպես էլ սոցիալական աջակցություն: Նոյեմբերի 1-ից 4 ամսվա ընթացքում կփոխհատուցվեն կոմունալ վճարումները, այսինքն՝ ձմռան ամիսներին: Աջակցությունը կվերաբերի յուրաքանչյուր ընտանիքին, որը կսպառի մինչև 200 կվտ էլեկտրաէներգիա, ինչպես նաև մինչև 200 խորանարդ մետր գազ, բացի այդ, կփոխհատուցվի նաև ջրի եւ աղբահանման վարձը: Սա նվազագույնն է, ինչով կառավարությունն այսօր կարող է աջակցել քաղաքացիներին: Սա անչափ կարելի է, սակայն գիտակցում ենք, որ հնարավոր է, որ մեր բազմաթիվ քաղաքացիներ որս անհրաժեշտությունը չունենան: Նրանք այսօրվանից հնարավորություն ունեն սեփական դիմումի հիման վրա հրաժարվել կառավարության աջակցությունից,- նշեց Գիորգի Գախարիան եւ հավելեց, որ քաղա-

քական որոշ ուժեր փորձում են զլոբալ համավարակն օգտագործել քաղաքական շահերի կտրվածքով, ցանկանում են բոլորին պատասխանատվության կոչ անել, եկեք հոգ տանենք մեր քաղաքացիների մասին, պահպանենք կանոնները, միասին կոչ անենք քաղաքացիներին կրել պաշտպանիչ դիմակ,- հայտարարեց Գիորգի Գախարիան: Անդրադառնալով կառավարության նիստի օրակարգին, վարչապետը նշեց, որ քննարկվելու է գազիֆիկացման հետագա եռամյա ծրագիրը, որը կվերաբերի 2022-2024 թվականներին: - Ինչպես գիտեք, այսօր երկրում ընթանում է կառավարության կողմից հաս-

տատված եռամյա գազիֆիկացման ծրագիրը, որն ավարտվում է 2021 թվականին: Շրջաններ բազմաթիվ այցեր կատարելուց հետո, մենք տեսանք, որ այս ծրագիրը պահանջում է շարունակություն, եւ այսօր մենք պետք է ապացուցենք, քննարկենք գազիֆիկացման հետագա եռամյա ծրագիրը, որը կվերաբերի 2022-2024 թվականներին, ու ցանկանում ենք ասել, որ փաստացի երկրի գազիֆիկացումը, այս գազիֆիկացման ծրագրի ավարտից հետո, 2024 թվականին կլինի լիարժեք ավարտված եւ Վրաստանը կունենա եվրոպայում գազիֆիկացման ամենաբարձր ցուցանիշներից մեկը: Դա կլինի մոտավորապես 90 տոկոս,- ասաց վարչապետը:

ԱՐԵՎԻԿԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻՑ ՕԳՏՎԵԼ Է ՇՈՒՐՁ 350 ՀԱՋԱՐ ՄԱՐԴ

Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանի կառավարությունը դեռևս մայիս ամսվանից սկսեց իրականացնել իր հակաճգնաժամային ծրագիրը: Այն նախատեսում էր վեց ամսվա ընթացքում 200-ական լարիի փոխանցում համավարակի պայմաններում եկամուտը կորցրած քաղաքացիներին, 300 լարիի միանվագ օգնություն ինքնազբաղ, սակայն գործունեությունը դադարեցրած քաղաքացիներին, ինչպես նաև նոյեմբերի 1-ից առաջիկա 4-ամիսների ընթացքում բնակչության որոշակի կատեգորիայի կոմունալ ծախսերի մարում:

Ձբաղվածության խթանման պետական գործակալության տվյալներով, 200 լարիանոց օգնություն է ստացել 161 905 շահառու: Ընդհանուր առմամբ, փոխանցվել է 106 288 400 լարի:

Նշենք, որ 200 լարիանոց պետական օգնություն ստանում է այն անձը, ով աշխատում էր՝ որպես վարձակալած աշխատող 2020 թվականի առաջին երեք ամիսներից առնվազն մեկ ամիս (ինչը հաստատվում է գործատուի կողմից եկամուտների ծառայություն մինչև 2020 թվականի մայիսի 1-ը ներկայացված Վրաստանի հարկային օրենսգրքի 154-րդ հոդվածով նախատեսված լրատվությամբ), ստացել է աշխատավարձ, եւ այն դադարեցվել է արտակարգ դրության ժամանակ:

Ծրագիրը վեցամսյա է, սկսվել է մայիսից եւ ավարտվելու է հոկտեմբերին:


Ըստ ամիսների, մայիսին 72 131 անձի փոխանցվել է 42 426 200 լարի, հունիսին՝ 143 801 անձի՝ 28 760 200 լարի, հուլիսին՝ 127 430 անձի՝ 25 486 000 լարի, օգոստոսին՝ 96 765 անձի՝ 19 353 000 լարի եւ սեպտեմբերին՝ 91,315 անձի՝ 18 263 000 լարի:

Ինչ վերաբերում է ինքնազբաղներին, վերջին տվյալների համաձայն, ընդհանուր առմամբ, 300 լարիանոց օգնությունը ստացել է 248 823 մարդ: Ընդհանուր առմամբ՝ 74 646 800 լարի: Այս դեպքում փոխհատուցում ստանալու իրավունք ունեն կորոնավիրուսի համավարակից տուժած անհատ ձեռներեցները, փոքր բիզնեսի կարգավիճակ ունեցող անհատները, որոնց մոտ ընթացիկ տարվա առաջին կիսամյակում գրանցվել է տնտեսական ակտիվություն կամ եկամուտ տնտեսական գործունեությունից, ինչպես նաև մակրոտնտեսական կարգավիճակ ունեցող ֆիզիկական անձինք, ովքեր մակրոբիզնեսի կարգավիճակ ստացել են մինչև 2020 թվականի ապրիլի 1-ը, եւ որոնք ֆինանսավորում չեն ստացել բյուջեից:

Մայիսին 300 լարիի միանվագ օգնություն է ստացել 29 981 անձ (ընդհանուր առմամբ, փոխանցվել է 8 994 300 լարի), հունիսին՝ 74 558 անձ (22 367 400 լարի), հուլիսին՝ 58 831 անձ (17 649 200 լարի), օգոստոսին՝ 84 915 անձ (25 474 500 լարի), հոկտեմբերին՝ 538 անձ (161 400 լարի):

Նշենք որ, կառավարությունը սկսած նոյեմբերի 1-ից չորս ամիս մարելու է կարիքավոր ընտանիքների կոմունալ ծախսերը:

ՆԱԹԻԱ ԹՈՒՐՆԱԿԱ. «ՄԵՆՔ ՄԵՐ ԽՈՍՏՈՒՄԸ ԿԱՏԱՐՈՒՄ ԵՆՔ. 2024 ԹՎԱԿԱՆԻՆ ՈՂՁ ՎՐԱՍՏԱՆԸ ԿԼԻՆԻ ԳԱԶԻՖԻԿԱՑՎԱԾ»



Հոկտեմբերի 27-ին Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Նաթիա Թուրնալան երկրում գազիֆիկացման աշխատանքների հաշվետվության եւ ապագա ծրագրերի ներկայացման շնորհանդեսին հայտարարեց, որ «Վրացական երազանքը» ճշտորեն կատարում է իր նախընտրական խոստումները: Մասնավորապես, ինչպես նշեց նախարարը, Վրաստանի 384 բնակավայրերում մինչև 2021 թվականը կլինի բնական գազ:

Ուրախ են, որ այսօր ինձ հնարավորություն տրվեց խորհրդանշորեն վառել գազօջախը այն մունիցիպալիտետում, որտեղ մենք գտնվում էինք մի քանի ամիս առաջ, եւ բնակչությանը խոստացանք իրականացնել պատմական գազիֆիկացման նախագիծը: Գազիֆիկացման լայնածավալ եռամյա ծրագրի շրջանակներում, մենք կատարել ենք խոստումը Վրաստանի 384 բնակավայրերի համար, որտեղ բնական գազը կլինի մինչև 2021 թվականը,- հայտարարեց Նաթիա Թուրնալան եւ հավելեց, որ կառավարության էկոնոմիկայի զարգացման ծրագրով արդեն 2024 թվականին ողջ Վրաստանը կլինի գազիֆիկացված:

ԲԻԶՆԵՍ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԱՌՑԱՆՑ ՀԱՐԹԱԿ՝ ՓՈՔՐ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Եվրամիությունը ստեղծել է Access2Markets առցանց հարթակ, որպեսզի փոքր եւ միջին բիզնեսի օժանդակի Եվրամիության սահմաններից դուրս առևտրում եւ օգնի եկամուտ ստանալ Եվրամիության առևտրային պայմանավորվածություններից:

Վրաստանում Եվրամիության ներկայացուցչության տեղեկատվությամբ, նոր հարթակը ավելի լավ է բացատրում շահագրգիռ կողմերին առևտրային պայմանագրերի պայմանները եւ ընկերություններին արտոնություններ է տալիս իրենց ապրանքների համար: Հարթակը կապասարկի ինչպես միջազգային առևտրով զբաղվող ընկերություններին, այնպես էլ նրանց, ովքեր նոր են սկսում ուսումնասիրել հնարավորությունները օտարերկրյա շուկաներում:

նոնների, ապրանքների հանդեպ պահանջարկի, մաքսային ընթացակարգերի, առևտրային խոչընդոտների եւ առևտրի վիճակագրության վերաբերյալ, պարունակում է նաև գործնական տեղեկատվություն Եվրամիության առևտրային համաձայնագրերի մասին, համապատասխան ձեռնարկներ եւ տեսանյութեր:

Վրաստանում Եվրամիության դեսպան Կառլ Հարցելի խոսքով, Եվրամիության Access2Market հարթակը հստակ եւ համապարփակ տեղեկություն է տրամադրում Եվրամիության 450 միլիոնանոց շուկա մուտքի կանոնների վերաբերյալ:

Վրաստանում Եվրամիության ներկայացուցչության հաղորդմամբ, Access2Markets



նոր հարթակում տրված են բացատրություններ եւ հաճախակի տրվող հարցեր, որոնք կօգնեն ինչպես նոր, այնպես էլ փորձառու ընկերություններին վերլուծել առևտրի օգուտը Եվրամիության յուրաքանչյուր առևտրային գործընկերոջ հետ: Եվրամիության ներկայացուցչության հայտարարության մեջ նշված է, որ հարթակն աշխատում է Եվրամիության բոլոր պաշտոնական լեզուներով: Այս պահին էջը վրացերենով մատչելի է:

ՔՐԵՍԱԿԱՆ

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է ԶՈՒԳՐԻԴԻՈՒՄ «ՍԱՔԱՐԹՎԵԼՈՍ ԲԱՆԿԻ» ԿՈՂՈՊՏԻ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես արդեն հաղորդել ենք, հոկտեմբերի 21-ին անհայտ անձը, հրազենի սպառնալիքով, ներխուժել էր Զուգդիդիի «Սաքարթվելոս բանկի» մասնաճյուղ, պատանդ վերցրել այդ պահին շենքում գտնվող 43 աշխատակիցների ու հաճախորդների:

Գրեթե ութամյա բանակցություններից հետո, կողոպտիչը 500 հազար դոլարով եւ երեք պատանդներով, պարեկային մեքենայով հեռացել էր դեպքի վայրը: Գանապարհին նա ազատ էր արձակել երեք պատանդներին եւ ուղեւորվել անհայտ ուղղությամբ: Վրաստանի ներքին գործերի նախարարության կողմից տեղեկություն տարածվեց հոկտեմբերի 21-ին Զուգդիդիում «Սաքարթվելոս բանկի» կողոպուտի փաստով

ընթացող հետաքննության մասին: Գերատեսչության հաղորդմամբ, բացահայտվել է հարձակմանը մասնակից հանցագործի ինքնությունը: ՆԳՆ-ի փոխանցմամբ, Զուգդիդիում, «Սաքարթվելոս բանկի» վրա հարձակումն իրականացրել է Բադրի Եսեբուան: Նրանց փոխանցմամբ, նրա գտնվելու վայրը պարզվելու եւ նրան ձերբակալելու նպատակով, ոստիկանությունը շարունակում է հատուկ օպերատիվ, քննչական

եւ որոնողական գործողությունները: Ինչպես տեղեկացրել է Վրաստանի պաշտպանության նախարարությունը, Բադրի Եսեբուան 2019 թվականից զորացրվել է եւ զինված ուժերի հետ առնչություն չունի: «Փաստով հետաքննությունը շարունակվում է քրեական օրենսգրքի 179-րդ, 236-րդ եւ 144-րդ հոդվածներով: Ներքին գործերի նախարարությունը պարբերաբար այս գործով լրացուցիչ տեղեկություններ է տրամադրելու հանրությանը»,- ասված է ՆԳՆ-ն հայտարարության մեջ:

ՄԻՄՈՆ ԿԻԼԱԶԵ

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԱՐՉԻԼ ԹԱԼԱԿՎԱԶԵՆ ՀԱՆԴԻՊԵՑ ԵԱՅԿ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԵՏ

Հոկտեմբերի 30-ին Վրաստանի խորհրդարանի նախագահ Արչիլ Թալակվազեն հանդիպում ունեցավ ԵԱՅԿ-ի խորհրդարանական վեհաժողովի (OSCE PA) դիտորդական առաքելության ղեկավար Էլեոնա Չոջա Գեյբրեայի եւ պատվիրակության անդամների հետ:




Հանդիպմանը խորհրդարանի նախագահը հակիրճ ամփոփեց Վրաստանի ժողովրդավարական բարեփոխումները, գրուցեց ընտրական միջավայրի եւ խորհրդարանական ընտրությունների նշանակության մասին:

Արչիլ Թալակվազեն հայտարարեց, որ Վրաստանը պատրաստ է էական համաձայնական համակարգով, ժողովրդավար ու ազատ ընտրություններ անցկացնելու համար, եւ հոկտեմբերի 31-ին քաղաքացիներն անվտանգ կքվեարկեն իրենց երկրի ապագայի համար:

Հանդիպմանը ներկա էին խորհրդարանի փոխխոսնակ Կախա Կունավան եւ «Վրացական երազանք» կուսակցության համաձայնական ցուցակը գլխավորող Նիկոլոզ Սամխարաձեն: Խորհրդարանի նախագահը ԵԱՅԿ-ի խորհրդարանական

վեհաժողովի դիտորդական պատվիրակությանը շնորհակալություն հայտնեց Վրաստան ժամանելու եւ ընտրությունները դիտորդելու համար, առանձնապես՝ գլոբալ համավարակի պայմաններում:



ՎԿՏՈՎԱՐ. ԶՈՂԿԵԼ Է 5 ՈՒՂԵՎՈՐ...

Երեկ հոկտեմբերի 30-ին Գորիի մոտակայքում, Թբիլիսի-Սենակի-Լեսելիժե ավտոճանապարհի 77-րդ կիլոմետրում, արեւմուտքի ուղղությամբ, թուրքական համարանիշով երթելով «Դաֆ» բեռնատարի ավտոմեքենան բախվել է ուղեւորատար միկրոավտոբուսին: Նշված ճանապարհային պատահարի հետեւանքով տեղում զոհվել է միկրոավտոբուսի 5 ուղեւոր, իսկ 11 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ: Եվս մեկը վախճանվել է բժշկական հաստատությունում:

Ավտոթարի կապակցությամբ ՆԳՆ աշխատակիցները ձերբակալել են Թուրքիայի քաղաքացի Ս.Ս.-ին՝ ծնված 1958 թվականին:

ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏՔԸ ՄՈՏԵՆՈՒՄ Է 7 ՄԻԼԻԱՐԴԻ ՇԵՄԻՆ

Սեպտեմբերի 30-ի դրությամբ, Վրաստանի պետական արտաքին պարտքը գերազանցում է 6,761 մլրդ դոլարը, այսինքն՝ 22,231 մլրդ լարի, ինչը 3,172 մլն դոլարով ավելի է, քան նախորդ ամիս:

Վրաստանի խոշորագույն վարկատուներն են՝ Ասիական զարգացման բանկը (ADB); Համաշխարհային բանկի միջազգային զարգացման ասոցիացիան (IDA) եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկը (IBRD):

Մասնավորապես, IDA-ին Վրաստանի արտաքին պարտքը կազմում է 909,533 մլն դոլար, IBRD-ին կազմում է 1,066 միլիարդ դոլար, իսկ Ասիական զարգացման բանկի (ADB) պարտքը գերազանցում է 1,412 միլիարդ դոլարը:

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ԼՐԱՑՈՒՑԻՉ 20,8 ՄԻԼԻՈՆ ԵՎՐՈ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

Վրաստանի եւ վերակառուցման վարկային բանկի (KfW) միջեւ ստորագրվել է վարկային ու դրամաշնորհային համաձայնագրերը՝ «սոցիալական անվտանգությունը COVID 19-ի համավարակի համատեքստում»:



Վրաստանի ֆինանսների նախարարության տեղեկությամբ, համաձայնագրերը ստորագրել են Վրաստանի ֆինանսների նախարար Իվանե Մաճավարիանին եւ Հարավային Կովկասում վերակառուցման վարկային բանկի (KfW) տարածաշրջանային գրասենյակի տնօրեն, Կլաուս Ֆայգելը:

անձանց սոցիալական օգնության հատուցման ապահովման համար:

Դրամաշնորհային համաձայնագրով հատկացված գումարը՝ 5,8 մլն եվրոյի չափով, նպատակային սոցիալական աջակցության ծրագրի համաձայն, նախատեսված է ծայրահեղ աղքատությունից տուժած մարդկանց սոցիալական օգնության համար:

Ըստ նրանց, նախագծի շրջանակներում, վարկային համաձայնագրով հատկացված 15 միլիոն եվրոն, տրամադրվում է COVID 19-ի համավարակից տուժած

գործընկեր միջազգային դոնոր կազմակերպություններից՝ COVID-19-ի համավարակի դեմ պայքարի եւ երկրի տնտեսության հետագա վերականգնման համար:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ԱՆՏԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ՝ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՍԵՐՎԻՍ-ԿԵՆՏՐՈՆՆԵՐՈՒՄ

Վրաստանի միջգերատեսչական համակարգող խորհրդի կողմից ընդունված որոշման համաձայն, կորոնավիրուսի տարածումը կանխելու նպատակով, ակտիվորեն շարունակվում են եկամուտների ծառայության տարբեր օբյեկտների, այդ թվում՝ քաղաքացիների սպասարկման սերվիս-կենտրոնների հատուկ լուծույթով ախտահանման աշխատանքները:



Եկամուտների ծառայության կողմից ախտահանման նախկանիսի աշխատանքներ իրականացվեցին Թբիլիսիի Իսանի-Սամգրիի, Վակե-Սարուրթալոյի եւ Գլխանի-Նաձալադեի սերվիս-կենտրոններում: Մաքրվեցին եւ համապատասխան լուծույթներով լրիվությամբ վերանշակվեցին ինչպես քաղաք-

քացիների ընդունման տարածքները, այնպես էլ՝ աշխատակիցների սենյակներն ու տեխնիկական միջոցները:

Ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության կողմից երկրի ողջ տարածքով իրականացվող ախտահանման աշխատանքները շարունակվում են:

ԿԱՆԽՎԵԼ Է ԹՄՐԱՆՅՈՒԹ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԴԵՂՈՐԱՅՔԻ ՆԵՐԿՐՈՒՄԸ



«Թբիլիսի» օդանավակայան սահմանային անցակետում կանխվել է թմրանյութ պարունակող դեղորայքի ապօրինի ներկրման փաստը:

Վրաստանի ֆինանսների նախարարության արդյունքում հայտնաբերվել է թմրանյութ պարունակող «Մետադոն» դեղորայքի 290 հաբ:

Քետազա արձագանքման նպատակով գործի նյութերը փոխանցվել են Վրաստանի ներքին գործերի նախարարության համապատասխան նախարարությանը:

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է ԶՂԱՅՏԱԳՐՎԱԾ ԱՊՐԱՆՔ


Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության մաքսային աշխատակիցները, Կարմիր կամուրջ սահմանային անցակետում, կասկածի հիման վրա, խուզարկել են Վրաստանի քաղաքացի Ս.Գ.-ի վարման ներքո գտնվող ավտոմեքենան: Խուզարկության արդյունքում, հայտնաբերվել է 3815 լարիի չհայտագրված երկրորդական պահեստամասեր:



Վրաստանի մաքսային օրենսգրքի 168 հոդվածի առաջին մասի համաձայն, իրավախախտում թույլ տված քաղաքացին տուգանվել է 3815 լարի գումարով:

ՍԱԴԱԽԼՈՅՈՒՄ ԵՎ ՍԱՐՓԻՈՒՄ ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼ ԵՆ ԻՐԱՎԱՆԱԽՏՄԱՆ ՓԱՍՏԵՐ

Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության մաքսային աշխատակիցների կողմից, «Սադախլո» ավտոմոբիլային եւ «Սարփի» սահմանային անցակետերում բացահայտվել են իրավախախտման փաստեր, մասնավորապես՝ «Սարփի» անցակետում Թուրքիայի Հանրապետությունից մուտք գործեց միջազգային բեռնափոխադրումներ իրականացնող բեռնատար ավտոմեքենա, որը վարում էր օտարերկրացի Փ.Ա.-ն:



Մաքսային աշխատակիցների կողմից ռիսկի գնահատման եւ վերլուծության հիման վրա, վերոնշյալ տարանցիկ բեռը փոխադրվեց Կարմիր միջանցք եւ անցկացվեց մաքսային վերահսկողության համապատասխան ընթացակարգով:

Արդյունքում, մաքսային վերահսկողության շրջանակներում ապրանքի մակերեսային ուսումնասիրության հետեւանքով, հայտնաբերվեց 3728 կգ չհայտագրված ապրանք, որի ընդհանուր մաքսային արժեքը կազմում է 288 893 լարի: Հետագա արձագանքման նպատակով, գործը փոխանցվել է ֆինանսների նախարարության քննչական ծառայությանը:

Օրինախախտման եւս մեկ փաստ բացահայտվեց «Սադախլո» ավտոմոբիլային սահմանային անցակետում: Վրաստանի քաղաքացի Գ.Գ.-ի ավտոմեքենայի խուզարկության արդյունքում, հայտնաբերվել է 11 928 լարիի ընդհանուր արժողության չհայտագրված ապրանք:

Վրաստանի մաքսային օրենսգրքի 168 հոդվածի առաջին մասի համաձայն, իրավախախտում կատարած քաղաքացին տուգանվել է 11 928 լարի գումարով:

COVID - 19

ԱՄԻՐԱՆ ԳԱՄՂՐԵԼԻՉԵ. «ԶՆԱՅԱԾ ՎԱՐԱԿՄԱՆ ԴԵՊԵՐԻ ԱՃԻՆ, ԵՐԿՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Ե ԶԱՄՎԱՐԱԿԱԲԱՆԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ»

Չնայած վերջին ժամանակներում կորոնավիրուսով վարակումների թվի կտրուկ ավելացմանը, երկրում վերահսկվում է հակավարակաբանական իրավիճակը:



աճի օրական միտումը կշարունակվի: Հիմնականում այն է, որ այս գործընթացը դեռևս կառավարելի է, եւ պետք է լիովին կառավարելի լինի,- հայտարարել է Ամիրան Գամդրելիձեն:

Այս մասին հոկտեմբերի 29-ին հայտարարեց հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնի ղեկավար Ամիրան Գամդրելիձեն: Նա քաղաքացիներին եւս մեկ անգամ կոչ արեց կատարել համավարակաբանների կողմից տրված հանձնարարականները: Նրա խոսքով, կանխատեսման տարբեր մոդելների օգտագործմամբ, վրաստանում կորոնավիրուսի տարածման գագաթնակետը սպասվում է նոյեմբերի երկրորդ, երրորդ շաբաթների ընթացքում, ուստի

երկրորդ, երրորդ շաբաթների ընթացքում: Դեպքերի ավելացման միտումը կշարունակվի, թեպետ գործընթացը դեռ կառավարելի է, եւ ամենակարեւորը դրա պահպանումն է: - Այս փուլում վիճակագրությունն աճում է: Օգտագործելով կանխատեսման տարբեր մոդելներ, որոնք մենք կիրառում ենք, գտնում ենք, որ գագաթնակետը կլինի նոյեմբերի երկրորդ, երրորդ շաբաթների ընթացքում, ուստի

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄ. ԱՇԽԱՐՀՈՒՄ ՎԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ԹԻՎՆ ԱՆՑԱՎ 45 ՄԻԼԻՈՆԸ

COVID-19-ի հաստատված դեպքերի թիվն աշխարհում անցել է 45,425 միլիոնը: Կորոնավիրուսի հետազոտական կենտրոնների տվյալների համաձայն, մահացածների թիվը գերազանցել է 1 187 549 հազարը: Ապաքինվել է 33 միլիոն 034 163 մարդ:

Վիրուսով վարակվածների թվով աշխարհում առաջին տեղում է ԱՄՆ-ը, որտեղ կա հաստատված 9 214 994 դեպք: Այստեղ մահացածների թիվը 234 201 է: Երկրորդ տեղում Հնդկաստանն է, որտեղ հաստատված դեպքերի թիվը հասել է 8 089 593-ի, մահացածներինը՝ 121 144-ի:

Վարակվածների թվով հաջորդ տեղում Բրազիլիան է, որտեղ վարակվել է 5 496 402, մահացել՝ 159 033 մարդ: Ռուսաստանում կորոնավիրուսով վարակվել է 1 559 976, վարակի հետեւանքով մահացել՝ 27 656 մարդ:

Ֆրանսիայում վարակվել է 1 282 769, վարակի հետեւանքով մահացել՝ 36 020 մարդ: Իսպանիայում վարակվել է 1 238 922, վարակի հետեւանքով մահացել՝ 35 639 մարդ: Իսպանիային հաջորդում են Արգենտինան, Կոլումբիան, Մեծ Բրիտանիան եւ Մեքսիկան:

Հայաստանում, ընդհանուր առմամբ, վարակվածների թիվը հասնում է 87 432-ի, մահացածներինը՝ 1 300-ի, ապաքինվածներինը՝ 54 316-ի: Արբեջանում վարակվածների թիվը կազմում է 53 152 մարդ: Վարակից մահացել է 708, ապաքինվել՝ 42 516 մարդ:

Հոկտեմբերի 30-ի տվյալներով, վրաստանում վարակվել է 37 263, մահացել՝ 285, ապաքինվել՝ 19 810 մարդ:

COVID-19-Ը ՆԵՐԹԱՓՈՒՑԵՑ ՆԱԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ «ԱՄԵՆԱԿԱՆԱԶ ԳՈՏԻ»՝ ՍԱՄՑԻՆԵ-ՉԱՎԱԽԵԹԻ

Ինչպես արդեն հաղորդել ենք, վրաստանում կորոնավիրուսով վարակման առաջին դեպքը գրանցվեց 2020 թվականի փետրվարի 26-ին:

Փետրվարի վերջին վարակման առաջին դեպքի հաստատմանը հաջորդեցին կառավարության կողմից ձեռնարկվող կանխարգելիչ միջոցառումները, որոնք նախատեսում էին մի շարք տնտեսական եւ սոցիալական սահմանափակումներ: Եվ սրանք էլ, վերջին հաշվով, դրական դեր կատարեցին կորոնավիրուսի տարածումը կանխելու ուղղությամբ: Եկոնոմիկայի վերականգնման, մարդկանց եկամուտներով ապահովման նպատակով կառավարության կողմից վերջին ժամանակներում իրականացվող միջոցառումները, ինչպես նաեւ անմիջականորեն բնակչության կողմից առողջապահության գերատեսչության հանձնարարականների անտեսումը վերջին ժամանակներում հանգեցրին վարակումների թվի, ինչպես նաեւ մահացության թվի կտրուկ աճի: Թեպետ, հարկ է նշել, որ թեկուզ շատ ավելի զարգացած,

ինչպես նաեւ հարեւան երկրների համեմատ, վրաստանում իրավիճակը կարելի էր համարել բարվոք, ինչը ընդունվել էր նաեւ միջազգային հանրության կողմից: Վրաստանը ճանաչվեց որպես «կանաչ գոտի», թեեւ համընդհանուր կարծիքով այդ գոտու «ամենականաչ հատվածը» Սամցխե-Չավախեթին էր, որտեղ մյուս տարածաշրջանների համեմատ, գրանցվել էին ամենաքիչ թվով վարակման դեպքեր: Սակայն, ցավոք, համավարակի այս ութ ամիսների ընթացքում, վերջին օրերին առաջին անգամ, վրաստանում վավերացվեցին վարակումների ռեկորդային թվեր: Կորոնավիրուսը ներթափանցեց նաեւ «ամենականաչ գոտի»:

Վերջին տվյալներով, Սամցխե-Չավախեթիում վարակվածների թիվը մոտենում է 300-ին: Ցավոք, կան նաեւ մահացածներ: Մասնավորապես, հոկտեմբերի 25-ին

կորոնավիրուսից մահացավ Ախալքալաքի շտապ օգնության 70-ամյա աշխատակցուհին, հոկտեմբերի 28-ին Գինոմինդաջի 78-ամյա մի տղամարդ:

Ստացված տեղեկության համաձայն, կորոնավարակման ախտանշաններ են հայտնաբերվել Ախալքալաքի մունիցիպալիտետի քաղաքապետ Յուրի Ունանյանի եւ մունիցիպալիտետի սակրեբուլոյի նախագահ Նաիրի Իրիցյանի մոտ:

Ախալքալաքի քաղաքապետի վիճակը գնահատվում է միջին ծանրության, իսկ սակրեբուլոյի նախագահինը՝ թեթև:

Covid-19-ով վարակված են Ախալքալաքի քաղաքապետի ընտանիքի բոլոր անդամները: Քաղաքապետն ու կինը գտնվում են Գորիի հիվանդանոցում, իսկ որդին, հարսը եւ թոռները բուժվում են տնային պայմաններում: Ինչ վերաբերում է սակրեբուլոյի նախագահ Նաիրի Իրիցյանին, ապա բացի նրանից, վարակվել են նաեւ նրա կինն ու որդին:

ՄԱՆՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ. ԻՆՉՊԵՍ ՏՆԱՅԻՆ ԴԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԲՈՒԺՎԵԼ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԻՉ

Կորոնավիրուսով վարակման դեպքերի կտրուկ աճով պայմանավորված՝ վրաստանի առողջապահության նախարարությունը բոլոր քաղաքացիներին կոչ է անում հետել մերկայացված հանձնարարականներին, եւ ամենակարեւորը, ե՛ւ բաց, ե՛ւ փակ տարածքներում կրել պաշտպանիչ դիմակ ու պահպանել սոցիալական հեռավորություն:

Կորոնավիրուսի թեկուզեւ կասկածելի ախտանշանների հայտնաբերման դեպքում, գերատեսչությունը խորհուրդ է տալիս խնել շատ հեղուկ եւ շատ շարժվել, զերծ մնալ թմրանյութերի, այդ թվում՝ ջերմությունն իջեցնող դեղամիջոցների անվերահսկելի ընդունումից:

Ինչ վերաբերում է տնային պայմաններում կորոնավիրուսից բուժման հարցին, գերատեսչությունը պարզաբանում է՝ եթե ձեզ մոտ հաստատվել է կորոնավիրուս, հավանականությունը, որ այն կուենա թեթև ընթացք, շատ մեծ է:

Մի խմբի ջերմությունն իջեցնող դեղամիջոցներ 38,3 աստիճանից ցածր ջերմության դեպքում:

Հնարավորինս ֆիզիկական վարժություններ կատարեք, քայլեք սենյակում, կատարեք վարժություններ, այն ամենը, ինչը ծանրաբեռնում է ոտքի մկանները:

Ձանգահարեք 112 (արտակարգ իրավիճակների ծառայություն), եթե զգում եք հետեւյալ ախտանշանները՝ երկարատեւ

կրծքավանդակի ցավ, գլխապտույտ, դեմքի կամ շրթունքների կարմրություն:

Եթե վարակված եք Covid-19-ով կամ խնամում եք Covid-ով հիվանդի, շփման ժամանակ դիմակ կրեք, հաճախ լվացեք ձեռքերը: Հնարավորության դեպքում, հիվանդին խորհուրդ է տրվում ունենալ առանձին սենյակ, սանհանգույց, ամհատական սպիտակեղեն եւ սպասք, որոնք լվացվում են առանձին: Մակերեսը հաճախ ախտահանեք եւ կրեք ռետինե ձեռնոցներ: Հիվանդության շրջանում հիվանդը չպետք է այցելուներ ունենա:

Ստորեւ ներկայացնում ենք նաեւ վրաստանի կառավարության ուղեցույցները, որոնց քաղաքացիները պետք է հետեւեն Covid-19-ը ախտորոշելուց հետո՝ տանը բուժում անցնելու դեպքում:

1. Մնացեք տանը: Մի գնացեք աշխատանքի, դպրոց, խանութ կամ մարդաշատ վայրեր: Մի օգտվեք հասարակական տրանսպորտից կամ տաքսի ծառայություններից:

2. Ժամանակի մեծ մասն անցկացրեք մեկուսացման մեջ՝ զերծ մնալով ընտանիքի անդամների հետ անմիջական շփումից:

3. Եթե ընտանիքի անդամների հետ շփումն անխուսափելի է, ընտանիքի բոլոր անդամները պետք է դիմակ կրեն:

4. Մի օգտագործեք ընդհանուր օգտագործման պարագաներ, օրինակ՝ սպասք, սրբիչ, սպիտակեղեն, հեռախոս:

5. Հաճախ օդափոխեք սենյակը՝ բացելով պատուհանները:

6. Մանրակրկիտ մաքրեք մակերեսները, որոնց հաճախակի եք հպվում, եւ սանհանգույցը: Օրինակ՝ սեղանի երեսը, դռան բռնակները, բջջային հեռախոսները:

7. Օգտագործեք մակերեսների համար նախատեսված ախտահանիչներ, որոնք կարող են օգտագործվել տնային պայմաններում:

8. Խմեք շատ հեղուկ, մի ընդունեք հակաբիոտիկներ կամ այլ դեղամիջոցներ առանց բժշկի նշանակման: Շարունակեք



պարբերաբար ընդունել ձեր դեղորայքը եւ մի փոխեք ձեր բուժման ծրագիրն առանց ձեր բժշկին տեղյակ պահելու:

9. Հազալու ախտանիշների առկայության դեպքում, աշխատեք մեջքի վրա չպառկել:

10. Ուշադրությամբ հետեւեք ձեր ախտանիշներին: Եթե ձեր առողջական վիճակը զգալիորեն կամ արագ վատթարացել է, առաջացել են շնչառական խնդիրներ, շնչակտոր վիճակ, դեմքի կամ շրթունքների ցիանոզ եւ այլն, դիմեք ձեր ընտանեկան բժշկին կամ 112 ծառայությանը: Տեղեկացրեք օպերատորին, որ ունեք հաստատված Covid-19-ի ախտորոշում:

Էջը պատրաստեց ՍՄՐԻՄՍ ԴԱՆԻԵԼՅԱՆԸ